


Գ. ԳԵՎՈՐԳ

Հ

ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ



ՀԱՅՊԵՏԱՐԱՆ
1940

891.990

9-47

Գ. ԳԵՎՈՐԳ

2011-05

սյ.

ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

ՀԵՔՅԱԹ

Նկարները

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀԱՅՊԵՏՐԱՏ

ՀԼԵՅՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԴՊ. ՏԱՆԵԿԱՒԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

18.03.2013

Պատ. խմբագիր՝ Գ. Սարյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գասպարյան
Սրբազրիչ՝ Ս. Փառսաղանյան

Г ГЕВОРК
МЫШКА И КОТ
Гяв АРМ. ССР. Ереван, 1940



2352
40

Գլխավորի լիազոր՝ Զ.—1075, Հրատ. 5133.
Պատվեր 97. Տիրած 3000.
Հանձնված է արտադրության 25 հունվարի 1940 թ.
Ստորագրված է տպագրության համար 7 մարտի 1940 թ.

Հայտնաբերած տպարան, Յերեան, Լենինի, 65

Մեզնից առաջ, հին դարերում,
Յեղեղ ե մի անտառ սիրուն,
Ուր ապահով, իրենց փառքով,
Իրար սիրով ու հարգանքով
Բնակվել են շատ թռչուններ,
Սողուն, միշտ ու գազաններ,
Վոր չեն յեղել իրար դուշման.
Բազե, ճնճղուկ, կաքավ ու ցին,
Սիրել, հարգել են միշտ իրար,
Մինչև անգամ շունն աղվեսին:

Այս անտառում, փոքրիկ բնում,
Ապրում եր մուկն ու թավալվում,
Խաղում անուշ ծաղկանց միջին,
Կաղին ուտում, քսում դնչին,
Իրեն-իրեն ուրախանում,
Յեվ իր վրա միշտ զարմանում,
Վոր ինչ ուտում դառնում ե յուզ—
Կաղին, ընկույզ թե այլ պտուղ:
Մի որ եսպես ծաղկանց միջին
Թավալվում եր մեր հանաքչին,
Նրան մոտիկ յեկավ կատուն
Կապուտաչյա ու թխավուն:

Մազլեցեցին ծառի բունը
Ու ներս մտան կատվի տունը.
Ու ենտեղ ել գրույց արին
Ել չթողին չարն ու բարին,
Վորոշեցին ախպեր դառնան
Ու ել իրար չմոռանան.
Յե՛վ եղ տեղ ել, հենց եղ բնում
Ապրեն՝ քանի կան աշխարհում:
Ու իրար հետ միշտ աշխատեն,
Զմռան համար մառան սարքեն,
Վոր ձմեռը խիստ ապահով
Լինեն հացով ու պարենով:

Խոսքը խոսք եր ու գործը-գործ,
Յերկուսն ել դեռ իրար անփորձ,
Հավան կացան այդ պայմանին,
Ու անց կացան իրենց բանին:
Յե՛վ ապրեցին նրանք այդպես՝
Մինչև աշնան քամին փչեց,
Վողջ անտառը դեղին հագավ,
Ու արեւ հեռու փախավ:
Բայց դեռ կատուն խիստ մտերիմ
Հարգում եր մուկ այդ ընկերին.
Ու մուկիկն ել իրեն հարգին
Սիրում եր դեռ սեփե կատվին:

Բայց յերբ անտառը մերկացավ
Զմռան ցրտերը սաստկացան,
Կերան իրենց պաշարը վողջ
Յերկու ընկեր վողջ և առողջ.
Մնաց միայն մի փոքր յուղ,
Ու յերկուսով խիստ անյերկյուղ,
Բռնած բերին ամանը այդ,
Եսպես խոսեց կատուն հանդարտ.
— Մուկիկ ախպեր, արի ես ել
Պահենք ձմռան նեղ որերին,
Իսկ մենք հիմա—դու ել, յես ել
Վորսով կապրենք: Դեռ ծառերի
Վրա յեղած միջատներով
Մի կերպ կապրենք մենք կուշտ փորով:
Յուղի ամանը պահեցին,
Տերևներով փաթաթեցին
Ու պառկեցին «մահճակալին»,
Վրան փռած խոտի խալին:
Դիշերը յերբ կեսը հասավ,
Մեր մուկիկը իրեն առավ.
— Խոր ե քնած խելոք կատուն.
Յես վեր կենամ թագուն-թագուն,
Մտնեմ մառանը անյերկյուղ
Ու ճաշակեմ մի փոքր յուղ:
Իր ասածը նա կատարեց:

Ու այսպես ել ամեն գիշեր
 Կատվից թագուն ու անլվա
 Յերբ չեր լսում միանման,
 Գողանում եր յուզն այդ անուշ,
 Կատվից թագուն ու շատ զգուշ:

Այսպես յերկար որեր տևեց,
 Մի որ կատուն ել վորոշեց
 Վոր մի գնա յուզին նայի
 Ձլինի թե գող գա տանի
 Ու յերկուսով մնան քաղցած,
 Անուշ յուզի համով հարբած:

Ու ինչ տեսավ նա մառանում՝
 Հենց մուկն ինքն ե յուզ գողանում:
 Ու թագ կացավ, վոր գող մուկը
 Կարգին լցնի իրեն բուկը:
 Բայց գող մուկը նրան տեսավ
 Ու ծվծվալով վրա հասավ,
 Հավար արավ ընկեր կատվին,
 Թե շուտ հասի, այս վայրկյանին,
 Գող ե մտել ու մառանում
 Յուզ չի թողել մեր ամանում:

Բայց ել կատուն չդիմացավ
 Ու ցասումով վրա հասավ,



Ուզեց խեղդի այդ գող մուկին,
Բայց մուկիկն ել իրեն հերթին
Յերբ նկատեց վտանգը այդ,
Մտավ պատի անցքը անհայտ:
Ու այն որից մինչև հիմա
Նրանք իրար դուշման դառան
Ու մուկիկը միշտ անվա
Ման ե գալիս մուկ աշխարհում,
Գետնի տակին, պատի միջում,
Լույս աշխարհի զոհողությամբ
Զբաղվում ե միշտ գողությամբ:
Իսկ կատուն ել քենը սրտում
Մտնանում ե հաճախ նստում,
Վոր մուկիկին յերբ պատահի,
Բռնի նրան ու առ մահի:



<< Ազգային գրադարան



NL0392891

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

7789

15372

Դ. ԴԵՎՈՐԷ
МЫШКА и КОТ
Դիզ Արմ. ՍՍՐ, Երևան, 1940 թ.